ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

12 ապրիլի 2024 թվականի թիվ 33-Ա

ք. Երևան

«ՎԻ ԷՄ ՏԵԼԵՊՐՈՋԵՔԹ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով 2024 թվականի մարտի 06-ին իր նախաձեռնությամբ հարուցված թիվ 6 վարչական վարույթի նյութերը, ***պարզեց.***

Հանձնաժողովը «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) վերապահված իր վերահսկողական գործառույթներն իրականացնելիս հայտնաբերել է Օրենքի պահանջի խախտում, այն է՝ տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտոր հանդիսացող «ՎԻ ԷՄ ՏԵԼԵՊՐՈՋԵՔԹ» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ նաև Դիստրիբյուտոր) իր գործունեությունն իրականացրել է առանց Հանձնաժողովի կողմից հաստատված «Россия-24» և «Россия-К» տեսալսողական ծրագրերը ներառող ծանուցում ներկայացնելու՝ խախտելով Օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի դրույթի պահանջը:

Հանձնաժողովն ուսումնասիրության արդյունքում պարզել է հետևյալը.

- 2024 թվականի հունվարի 29-ին Դիստրիբյուտորի կողմից ներկայացվել է «Россия-К», «Россия-24» տեսալսողական ծրագրերի մասին Օրենքով պահանջվող ծանուցումը: Ծանուցմանը կից ներկայացվել է Դիստրիբյուտորի և «Համառուսական պետական հեռուստառադիոհեռարձակման ընկերություն» դաշնային պետական ունիտար ձեռնարկության մասնաճյուղի «Սովտելեէքսպորտ» ներտնտեսական միավորման (ФИЛИАЛ ФЕДЕРАЛЬНОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИТАРНОГО ПРЕДПРИЯТИЯ «ВГТРК» «ВНЕШНЕЭКОНОМИЧЕСКОЕ ОБЪЕДИНЕНИЕ СОВТЕЛЕЭКСПОРТ») ընկերության միջև 2021 թվականի մայիսի 27-ին կնքված N 1497/3000 պայմանագրի պատճենը: Սակայն 27.05.2021թ.-ին կնքված պայմանագիրն ամբողջական չի ներկայացվել՝ պայմանագրի որոշ հատվածներ փակված են եղել: Պայմանագիրն ամբողջական ներկայացնելու վերաբերյալ Դիստրիբյուտորին կրկին տեղեկացվել է Հանձնաժողովի 2024 թվականի փետրվարի 05-ի և 13-ի գրություններով:
- Դիստրիբյուտորը նշել է, որ պայմանագրի այն հատվածները, որոնք վերաբերում են պայմանագրի կողմերի ֆինանսական հարաբերություններին, փակված են, քանի որ վերաբերելի չեն Հանձնաժողովի գործառույթներին և չեն կարող ազդել ծանուցումը հաստատելու կամ մերժելու որոշման վրա, ինչը չի կարող համարվել փաստաթղթի ամբողջականության խախտում: Դիստրիբյուտորը նշել է նաև, որ ծանուցմանը կից

ներկայացված պայմանագրի այն դրույթները, որոնք փակված են, պարունակում են առևտրային գաղտնիք:

- Օրենքի 54-րդ հոդվածի 3-րդ մասով տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորի համար պարտավորություն է սահմանված ծանուցման մեջ նշել ծրագրերի վերաբերյալ Օրենքով պահանջվող տեղեկությունները, ինչպես նաև ծանուցմանը կից ներկայացնել տեսալսողական ծրագրի իրավատիրոջ հետ կնքված պայմանագրի պատճենը, ավելին՝ օրենսդիրն այստեղ որևէ բացառություններ չի սահմանել, հետևաբար պայմանագիրն ամբողջական է իր մեջ ներառված ամբողջ նյութով, հավելվածներով, ինչը Դիստրիբյուտորի կողմից 2024 թվականի հունվարի 29-ի ծանուցմանը կից ներկայացված 27.05.2021թ.-ի թիվ 1497/3000 պայմանագրի դեպքում չի պահպանվել:
- Հանձնաժողովի 2024 թվականի փետրվարի 19-ի թիվ 19-Ա որոշմամբ մերժվել է «ՎԻ ԷՄ ՏԵԼԵՊՐՈՋԵՔԹ» ՍՊ ընկերության ծանուցման հաստատումը՝ «Россия-К», «Россия-24» տեսալսողական ծրագրերի մասով՝ հիմք ընդունելով Դիստրիբյուտորի կողմից 29.01.2024թ.-ի ծանուցմամբ ներկայացված 27.05.2021թ. № 1497/3000 պայմանագրի թերի լինելը:
- Դիստրիբյուտորը 2024 թվականի փետրվարի 22-ին վարչական բողոք է ներկայացրել Հանձնաժողով Հանձնաժողովի 2024 թվականի փետրվարի 19-ի թիվ 19-Ա որոշումը (մի մասը) վերացնելու և կայացնելու նոր որոշում՝ հաստատելով Դիստրիբյուտորի 2024 թվականի հունվարի 29-ի ծանուցումը Россия-К», «Россия-24» տեսալսողական ծրագրերի վերաբերյալ:
- Հանձնաժողովի 2024 թվականի մարտի 22-ի ««ՎԻ ԷՄ ՏԵԼԵՊՐՈՋԵՔԹ» ՍՊ ընկերության վարչական բողոքը մերժելու և Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2024 թվականի փետրվարի 19-ի թիվ 19-Ա որոշումն անփոփոխ թողնելու մասին» թիվ 28-Ա որոշմամբ մերժվել է Դիստրիբյուտորի վարչական բողոքը՝ անփոփոխ թողնելով Հանձնաժողովի 2024 թվականի փետրվարի 19-ի թիվ 19-Ա որոշումը:

Հանձնաժողովն իր վերահսկողական գործառույթներն իրականացնելիս պարզել է հետևյալը.

Դիստրիբյուտորը, Հանձնաժողովի կողմից չունենալով հաստատված ծանուցում «Россия-24» և «Россия-К» տեսալսողական ծրագրերի վերաբերյալ, ցանցային օպերատորների հետ կնքել է պայմանագրեր «Россия-К», «Россия-24» տեսալսողական ծրագրերի վերահաղորդման վերաբերյալ:

Այսպես՝

Հանձնաժողովը 2024 թվականի փետրվարի 23-ին թիվ Ե/02/04.2/196-24 գրությամբ դիմել է «ՅՈՒՔՈՄ» ՓԲ ընկերությանը՝ խնդրելով ներկայացնել «Россия-24» և «Россия-К» տեսալսողական ծրագրերի վերահաղորդման իրավունքը հաստատող փաստաթղթերի (պայմանագրերի) պատճենները: Նշված գրությանն ի պատասխան «ՅՈՒՔՈՄ» ՓԲ ընկերությունը սույն թվականի մարտի 03-ին ներկայացրել է իր և Դիստրիբյուտորի միջև 2022 թվականի փետրվարի 22-ին կնքված «Տեսալսողական ծրագրերի վերահաղորդման իրավունքի (թույլտվության) մասին» թիվ N VMT-01/01-2022 պայմանագիրը, ինչպես նաև նշված պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին համաձայնագրերը: Եվ համաձայն թիվ Հ2-01/01-22 Համաձայնագրի (կնքված 2023 թվականի հունվարի 25-ին)՝ «Վի Էմ Տելեպրոջեքթ» ՍՊ ընկերությունը «ՅՈՒՔՈՄ» ՓԲ ընկերությանը տրամադրել է «Россия-24» և «Россия-К»

տեսալսողական ծրագրերի վերահաղորդման իրավունքը մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը:

Հանձնաժողովը 2024 թվականի փետրվարի 27-ին թիվ Ե/04/04.2/200-24 գրությամբ դիմել է «ՔՈԼԼ ՄԱՍՏԵՐ» ՍՊ ընկերությանը, և վերջինս 2024 թվականի փետրվարի 28-ին գրությամբ Հանձնաժողով է ներկայացրել տեսալսողական ծրագրի վերահաղորդման իրավական հիմքերը՝ Դիստրիբյուտորի հետ կնքված 2023 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ N VMT-01/42-2024 պայմանագիրը, ինչպես նաև պայմանագրին կից թիվ 1 հավելվածը: Եվ համաձայն կնքված պայմանագրի՝ «Վի Էմ Տելեպրոջեքթ» ՍՊ ընկերությունը «ՔՈԼԼ ՄԱՍՏԵՐ» ՍՊ ընկերությանը տրամադրել է «Россия-К» տեսալսողական ծրագրի վերահաղորդման իրավունքը 2024 թվականի հունվարի 01-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը:

Հանձնաժողովը, ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով, 2024 թվականի մարտի 06-ին Դիստրիբյուտորի նկատմամբ հարուցել է վարչական վարույթ առանց Օրենքի 54-րդ հոդվածով սահմանված ծանուցման գործունեություն իրականացնելու հատկանիշներով:

Հանձնաժողովը հարուցված վարչական վարույթի մասին 2024 թվականի մարտի 06-ին ծանուցել է Դիստրիբյուտորին և հայտնել, որ այս հարցի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց պարզաբանումները և բացատրությունները:

Հարուցված վարչական վարույթի ընթացքում Դիստրիբյուտորը որևէ պարզաբանում կամ բացատրություն Հանձնաժողով չի ներկայացրել:

Հանձնաժողովը 2024 թվականի մարտի 11-ին «ՔՈԼԼ ՄԱՍՏԵՐ» ՍՊ և «ՅՈՒՔՈՄ» ՓԲ ընկերություններին, մարտի 13-ին «ՎԻՐՈՒՍ ՆԵՏ» ՍՊ և «ՏԵԼԵՄԱՔՍ ՏԻՎԻ» ՍՊ ընկերություններին (այսուհետ նաև՝ ցանցային օպերատորներ) գրությամբ տեղեկացրել է, որ Դիստրիբյուտորը Հանձնաժողովի կողմից չունի հաստատված ծանուցում «Россия-24» և «Россия-К» տեսալսողական ծրագրերի մասով, իսկ «ՎԻՐՈՒՍ ՆԵՏ» ՍՊ և «ՏԵԼԵՄԱՔՍ ՏԻՎԻ» ՍՊ ընկերություններին խնդրել է Հանձնաժողով ներկայացնել «Россия-24» և «Россия-К» տեսալսողական ծրագրերի վերահաղորդումը հավաստող՝ Դիստրիբյուտորի հետ կնքված պայմանագրերի պատճենները:

«ՏԵԼԵՄԱՔՍ ՏԻՎԻ» ՍՊ ընկերությունը 2024 թվականի մարտի 20-ին Հանձնաժողով ներկայացրել է իր և Դիստրիբյուտորի միջև 2023 թվականի դեկտեմբերի 25-ին կնքված «Տեսալսողական ծրագրերի վերահաղորդման իրավունքի (թույլտվության) մասին» թիվ N VMT-01/29-2024 պայմանագիրը, ինչպես նաև պայմանագրից կից թիվ 1 հավելվածը: Եվ համաձայն պայմանագրի՝ «Վի Էմ Տելեպրոջեքթ» ՍՊ ընկերությունը «ՏԵԼԵՄԱՔՍ ՏԻՎԻ» ՍՊ ընկերությանը տրամադրել է «Россия-24» և «Россия-К» տեսալսողական ծրագրերի վերահաղորդման իրավունքը 2024 թվականի հունվարի 01-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը:

«ՎԻՐՈՒՍ ՆԵՏ» ՍՊ ընկերությունը 2024 թվականի մարտի 14-ին Հանձնաժողով ներկայացրել է իր և Դիստրիբյուտորի միջև 2023 թվականի դեկտեմբերի 25-ին կնքված «Տեսալսողական ծրագրերի վերահաղորդման իրավունքի (թույլտվության) մասին» թիվ VMT-01/46-2024 պայմանագիրը և կից թիվ 1 հավելվածը: Եվ համաձայն այս պայմանագրի՝ «Վի Էմ Տելեպրոջեքթ» ՍՊ ընկերությունը «ՎԻՐՈՒՍ ՆԵՏ» ՍՊ ընկերությանը տրամադրել է «Россия-24» և «Россия-К» տեսալսողական ծրագրերի վերահաղորդման իրավունքը 2024 թվականի հունվարի 01-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը:

Ի պատասխան ցանցային օպերատորների գրությունների՝ Դիստրիբյուտորը հայտնել է, որ «ՎԻ ԷՄ ՏԵԼԵՊՐՈՋԵՔԹ» ՍՊ ընկերությունը «Россия-24» և «Россия-К» տեսալսողական

ծրագրերի մասով ունի օրենքի պահանջներին համապատասխան պայմանագիր, որն էլ ծանուցմանը կից ներկայացրել է Հանձնաժողով: Հանձնաժողովը, սակայն, մերժել է ծանուցման հաստատումը, ինչի կապակցությամբ «ՎԻ ԷՄ ՏԵԼԵՊՐՈՋԵՔԹ» ՍՊ ընկերությունն օրենքով սահմանված կարգով ներկայացրել է վարչական բողոք, ինչպես նաև իրականացնում է իր իրավունքների պաշտպանության այլ գործառույթներ:

Դիստրիբյուտորը ցանցային օպերատորներին հասցեագրված գրություններով հայտնել է նաև, որ հաշվի առնելով ընկերությունների միջև ձևավորված գործընկերային հարաբերությունները՝ «ՎԻ ԷՄ ՏԵԼԵՊՐՈՋԵՔԹ» ՍՊ ընկերությունն այսուհետ իրենց ներկայացվող հաշիվներում մարտ ամսից չի ներառի «Россия-К» և «Россия-24» տեսալսողական ծրագրի վերահաղորդման համար նախատեսված վճարները, քանի դեռ ծանուցման հաստատման մասով տեղի են ունենում գործընթացներ:

Հարուցված վարչական վարույթի ընթացքում Դիստրիբյուտորը 2024 թվականի ապրիլի 11-ին Հանձնաժողով ներկայացրած գրությամբ հայտնել է իր դիրքորոշումը հետևյալի մասին.

«(...) «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի՝ վարչական վարույթի առավելագույն ժամկետը 30 օր է: Օրենքով կարող են սահմանվել հատուկ՝ 30 օրից կարճ կամ ավելի երկար ժամկետներ:

Հանձնաժողովի իրավաբանական և լիցենզավորման վարչության պետի գրությունների մեջ նշված է, որ վարչական վարույթ հարուցվել է Հանձնաժողովի նախաձեռնությամբ, սակայն ինչպես գրությամբ, այնպես էլ վարչական վարույթի նյութերի ուսումնասիրության արդյունքում մեր կողմից չի հայտնաբերվել Հանձնաժողովի որոշում Ընկերության նկատմամբ վարչական վարույթ հարուցելու վերաբերյալ:

Ենթադրվում է, որ վարչական վարույթ հարուցվել է այն գործողության (գործողությունների) սկսման օրվանից, որը նպատակամղված է վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական ակտի ընդունմանը:

(...) Ընդ որում, հարկ է նշել, որ մինչ սույն դիրքորոշումը ներկայացնելու պահն Ընկերությանը չի ներկայացվել որևէ հիմք, ապացույց, որից պարզ կլինի, որ Հանձնաժողովը՝ որպես վարչական կոլեգալ մարմին, եկել է եզրակացության Ընկերության նկատմամբ հարուցելու վարչական վարույթ կամ ցուցաբերել է այդպիսի նախաձեռնություն: Ամբողջ գործընթացն իրականացվել է Հանձնաժողովի աշխատակազմի կողմից, ըստ էության, ստացվում է, որ աշխատակազմն էլ որոշել է ինչ-որ մի պահ Ընկերության նկատմամբ հարուցել վարչական վարույթ:

Այնուամենայնիվ, եթե նույնիսկ դիտարկենք, որ Հանձնաժողովն է ցուցաբերել նախաձեռնություն (ինչն իրականում այդպես չէ), վարչական վարույթի հարուցման սկիզբ դիտարկենք 2024 թվականի մարտի 6-ը (ինչը ևս այդպես չէ), ստացվում է, որ նույնիսկ այդ պարագայում անցել է օրենքով նախատեսված վարչական վարույթի իրականցման 30-օրյա ժամկետը, վարչական վարույթը չի երկարաձգվել, չի կասեցվել, ուստի առնվազն 06.04.2024թ. պետք է լինի Հանձնաժողովի որոշումը վարչական վարույթի եզրափակման վերաբերյալ:

Նման պայմաններում վարչական վարույթում առկա ցանկացած ապացույցների շրջանակի պարագայում Հանձնաժողովի ցանկացած որոշում լինելու է անվավեր, օրենքին հակասող»:

Դիստրիբյուտորն իր կողմից ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է նաև, որ իր համար հասկանալի չէ, թե ինչ հիմքով է հարուցված վարչական վարույթը, ինչ իրավախախտում է վերագրվում իրենց: Ավելին, Դիստրիբյուտորը նշել է, որ Հանձնաժողով ներկայացրել է ծանուցում «Россия-К», «Россия-24» տեսալսողական ծրագրերի վերաբերալ, և

Հանձնաժողովի կողմից չհաստատված ծանուցման պայմաններում գործունեություն իրականացնելը (ցանցային օպերատորների հետ վերահաղորդման պայմանագրեր կնքելը) Օրենքով որևէ իրավական հետևանք չի առաջացնում, դրա համար Օրենքը որևէ պատասխանատվություն չի նախատեսում, ինչն էլ հիմք է տալիս պնդելու, որ քննարկվող վարչական վարույթի արդյունքում որևէ պարագայում պատասխանատվություն նախատեսող որոշում չի կարող ընդունել:

Դիստրիբյուտորն իր դիրքորոշմամբ խնդրել է Հանձնաժողովին ձեռնպահ մնալ քննարկվող վարչական վարույթի արդյունքում «ՎԻ ԷՄ ՏԵԼԵՊՐՈՋԵՔԹ» ՍՊ ընկերության նկատմամբ միջամտող վարչական ակտ ընդունելուց:

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Այսպիսով, վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է հետևյալը.

Օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը սահմանում է՝

«2. Սույն օրենքը սահմանում է տեսալսողական մեդիածառայություն մատուցողների և օպերատորների կարգավիճակը, կանոնակարգում է հեղինակազորման, լիցենզավորման, ծանուցումների ներկայացման կարգը, սույն օրենքի կարգավորման առարկա հանդիսացող սուբյեկտների իրավունքների ու պարտականությունների առաջացման հիմքերը, գործունեության ընթացքում ծագող հարաբերությունները»:

Իսկ 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ **կարգավորող պետական մարմին՝** անկախ պետական մարմին, որն ապահովում է հեռարձակվող լրատվության միջոցների ազատությունը, անկախությունը և բազմազանությունը, վերահսկում է Հեռարձակողների, օպերատորների և տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորների գործունեությունը:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը սահմանում է.

«**տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտոր**՝ Հեռարձակողի հետ պայմանագրի հիման վրա օպերատորին տարածման նպատակով տեսալսողական ծրագրեր տրամադրող ֆիզիկական կամ իրավաբանական անձ.»:

Օրենքի 54-րդ հոդվածը սահմանում է.

«1. Տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորը գործում է օրենսդրության համաձայն կարգավորող պետական մարմին ծանուցում ներկայացնելուց հետո:

2. Յուրաքանչյուր նոր տեսալսողական ծրագրի վերաբերյալ ներկայացվում է ծանուցում:

3. Ծանուցումը ներառում է՝

1) տեղեկություններ տեսալսողական ծրագրերի վերաբերյալ.

2) տեղեկություններ տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտոր հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձի վերաբերյալ.

3) տեսալսողական ծրագրի իրավատիրոջ հետ կնքված պայմանագրի պատճենը.

4) տեղեկություններ Հեռարձակողների և օպերատորի հիմնադիր կամ մասնակից հանդիսանալու վերաբերյալ:

4. Կարգավորող պետական մարմինը ծանուցումը հաստատում է 20-օրյա ժամկետում:

5. Ծանուցման մեջ թերի, ակնհայտ կեղծ կամ խեղաթյուրված տեղեկություններ լինելու կամ օտարերկրյա տեսալսողական ծրագրերում գովազդ ներառված լինելու դեպքում այն չի

հաստատվում, բացառությամբ այն դեպքերի, երբ հնարավոր չի եղել ձեռք բերել տվյալ տեսալսողական ծրագրի առանց գովազդի տարբերակը:»:

Համաձայն Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս գործող Հեռարձակողների տեսալսողական ծրագրերը ցանցային օպերատորի լիցենզիա ստացած անձի կողմից կարող են վերահաղորդվել տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորի կամ հեռարձակողի հետ պայմանագրի հիման վրա:

Օրենքի 49-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է.

«Վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի յուրաքանչյուր փոփոխության վերաբերյալ ցանցային օպերատորը տեղեկացնում է կարգավորող պետական մարմնին:»:

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են վարչական վարույթի նյութերը և առաջնորդվելով ինչպես գործում առկա, այնպես էլ ներկայացված ապացույցներով՝ ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է, որ ցանցային օպերատորները Դիստրիբյուտորի հետ ունեն կնքված պայմանագրեր «Россия-24» և «Россия-К» տեսալսողական ծրագրերի վերահաղորդման վերաբերյալ:

Հանձնաժողովը՝ որպես տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող պետական մարմին, Օրենքով վերապահված իր վերահսկողական լիազորություններն իրականացնելիս ուսումնասիրել է ցանցային օպերատորների կողմից Հանձնաժողով ներկայացված վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի ցանկերը, ուսումնասիրել է ցանցային օպերատորների և Դիստրիբյուտորի միջև կնքված տեսալսողական ծրագրերի վերահաղորդման պայմանագրերը և համաձայնագրերը: Այդ աշխատանքներն իրականացնելիս համադրության արդյունքում արձանագրվել է, որ ցանցային օպերատորներ «ՔՈԼԼ ՄԱՍՏԵՐ» ՍՊ, «ՅՈՒՔՈՄ» ՓԲ, «ՏԵԼԵՄԱՔՍ ՏԻՎԻ» ՍՊ և «ՎԻՐՈՒՍ ՆԵՏ» ՍՊ ընկերությունները Դիստրիբյուտորի հետ կնքված վերահաղորդման պայմանագրերի համաձայն իրավունք են ստացել վերահաղորդելու «Россия-24» և «Россия-К» տեսալսողական ծրագրերը, և այդ տեսալսողական ծրագրերը ներառված են վերջիններիս կողմից ներկայացված տեսալսողական ծրագրերի ցանկերում:

Այսպիսով, վարչական վարույթի նյութերի ուսումնասիրության արդյունքում ամրագրում ենք, որ Օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասով տեսալսողական ծրագրերի Դիստրիբյուտոր հանդիսացող անձի համար պարտավորություն է սահմանված Հայաստանի Հանրապետության տարածքում գործել օրենսդրության համաձայն՝ Հանձնաժողով ծանուցում ներկայացնելուց հետո, իսկ համաձայն նույն հոդվածի 2-րդ մասի՝ յուրաքանչյուր նոր տեսալսողական ծրագրի վերաբերյալ նույնպես Հանձնաժողով ներկայացնել ծանուցում:

Եվս մեկ անգամ վերլուծելով վերը նշված իրավական նորմերը՝ ամրագրում ենք, որ Օրենքով սահմանված կարգով յուրաքանչյուր Դիստրիբյուտոր կարող է Հայաստանի Հանրապետության տարածքում գործունեություն ծավալել բացառապես տեսալսողական մեդիաոլորտը կարգավորող անկախ պետական մարմին՝ Հանձնաժողով, պատշաճ ծանուցում ներկայացնելուց հետո: Ավելին՝ նման գործունեություն ծավալելու (ցանցային օպերատորի հետ տարածման նպատակով տեսալսողական ծրագրեր տրամադրելու վերաբերյալ պայմանագիր կնքելու) իրավունք Դիստիբյուտորը ստանում է ոչ թե այն օրվանից, երբ որևէ տեսալսողական ծրագրի իրավատիրոջ հետ կնքում է պայմանագիր, այլ այն օրվանից, երբ Հանձնաժողովը Օրենքով սահմանված կարգով հաստատում է Դիստրիբյուտորի ծանուցումը:

Իրականացնելով Օրենքի պահանջների համակարգային վերլուծություն՝ Հանձնաժողովը փաստում է, որ Դիստրիբյուտորը մինչև Հանձնաժողովին պատշաճ ծանուցելը և

թույլտվություն ստանալը իրավունք չուներ պայմանագիր կնքել որևէ ցանցային օպերատորի հետ:

Իսկ ինչ վերաբերում է Դիստրիբյուտորի կողմից ներկայացված դիրքորոշմամբ հայտնած այն պնդմանը, որ Հանձնաժողովը խախտել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, ինչպես նաև 46-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դրույթները և ժամկետները, ապա փաստենք, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ սույն օրենքը սահմանում է վարչարարության հիմունքները, կարգավորում է վարչական ակտեր ընդունելու, վարչական ակտերը, վարչական մարմինների գործողությունները և անգործությունը բողոքարկելու, վարչական ակտի կատարման, վարչական ծախսերի, ինչպես նաև վարչարարությամբ հասցված վնասի հատուցման հետ կապված՝ վարչական մարմինների և ֆիզիկական կամ իրավաբանական անձանց (այսուհետ՝ անձինք) միջև ծագած հարաբերությունները:

Այսինքն՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով կարգավորվում են վարչական մարմինների կողմից վարչարարություն իրականացնելու ընդհանուր կարգն ու պայմանները, վարույթի մասնակիցների իրավունքների և պարտականությունների շրջանակը: Իսկ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները սահմանվում են օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

Սույն վարչական վարույթի հետ կապված նշենք, որ տեսալսողական մեդիայի ոլորտում ծագած իրավահարաբերության՝ որպես առանձին տեսակի իրավահարաբերության առանձնահատկությունները սահմանվում են «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով, մասնավորապես՝ **տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջները, լիցենզիայի պայմանները խախտելու համար** պ**ատասխանատվություն սահմանող** 55-րդ հոդվածով, ինչպես նաև կատարված իրավախախտման համար պատասխանատվության միջոցներ սահմանող 57-րդ հոդվածով:

Իր դիրքորոշմամբ Դիստրիբյուտորը հայտնում է նաև, որ Ընկերությանը չի ներկայացվել որևէ հիմք, ապացույց, որից պարզ կլինի, որ Հանձնաժողովը՝ որպես վարչական կոլեգիալ մարմին, եկել է եզրակացության Ընկերության նկատմամբ հարուցելու վարչական վարույթ կամ ցուցաբերել է այդպիսի նախաձեռնություն: Ամբողջ գործընթացն իրականացվել է Հանձնաժողովի աշխատակազմի կողմից, ըստ էության, ստացվում է, որ աշխատակազմն էլ որոշել է ինչ-որ մի պահ Ընկերության նկատմամբ հարուցել վարչական վարույթ:

Դիստրիբյուտորի այս պնդումն անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ի մասի համաձայն՝ վարչական վարույթ հարուցելու հիմքերն են՝

ա) անձի դիմումը, բողոքը,

բ) վարչական մարմնի նախաձեռնությունը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթը համարվում է հարուցված այն գործողության (գործողությունների) սկսման օրվանից, որը նպատակամղված է վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական ակտի ընդունմանը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 34-րդ հոդվածի համաձայն՝ վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական վարույթ հարուցելու հիմքերն են՝ վարչական ակտ ընդունելու վերաբերյալ օրենքի պահանջը, դրանից բխող անհրաժեշտությունը կամ օրենքով վարչական մարմնին վերապահված հայեցողական լիազորությունը:

Այսպիսով, Հանձնաժողովը, կատարելով իրեն վերապահված հայեցողական լիազորությունը և հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասը, վարչական վարույթը հարուցել է 2024 թվականի մարտի 6-ին:

Արձանագրենք, նաև, որ Օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Կարգավորող պետական մարմինն իր աշխատանքները կազմակերպում է կառուցվածքային ստորաբաժանումների միջոցով, իսկ Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝

«1. Կարգավորող պետական մարմնի նախագահը՝

7) իրականացնում է կարգավորող պետական մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների ընդհանուր ղեկավարումը.»

Ուստի Հանձնաժողովը, հիմք ընդունելով նշված իրավանորմերը, Հանձնաժողովի քննարկմանը ներկայացվող նյութերի պատրաստումը և ընթացակարգային աշխատանքները, հանձնարարում է իր կառուցվածքային ստորաբաժանումներին կատարելու այդ աշխատանքները, ինչպես նաև վարչական վարույթի հարուցման հետ կապված փաստաթղթերի, նյութերի ուսումնասիրությունը:

Հանձնաժողովն էլ իր գործունեությունը կազմակերպում է նիստերի և աշխատանքային քննարկումների միջոցով: Հանձնաժողովի իրավասությանն է վերապահված վարչական վարույթի եզրափակիչ փուլում վարչական վարույթի քննարկման հարցը, որը տեղի է ունենում Հանձնաժողովի կողմից հրավիրված նիստերում, իսկ տվյալ հարցի քննարկման արդյունքում ընդունվում է Հանձնաժողովի որոշում, որը ստորագրում է Հանձնաժողովի նախագահը կամ նրան փոխարինող անձը:

Դիստրիբյուտորն իր դիրքորշմամբ հայտնել է նաև, որ վարչական վարույթի նյութերի ուսումնասիրության արդյունքում հայտնաբերվել են ցանցային օպերատորներին մի շարք գրություններ՝ ուղղված Դիստրիբյուտորի կողմից ենթադրյալ իրավախախտումը բացահայտելուն, և վերջինիս կողմից անհասկանալի է, թե ինչու է վարույթը հարուցվել 2024 թվականի մարտի 06-ին:

Այս պնդման կապակցությամբ նշենք, որ Օրենքի գործողությունը տարածվում է նաև ցանցային օպերատորների վրա և Հանձնաժողովը՝ որպես տեսալսողական մեդիա ոլորտի կարգավորող մարմին, Օրենքով սահմանված սուբյեկտներից կարող է պահանջել և ստանալ անհրաժեշտ փաստաթղթեր և այլ տեղեկատվություն: Հանձնաժողովի կողմից ստացված տեղեկատվության ուսումնասիրության արդյունքում էլ, մասնավորապես, հարուցվել է սույն վարչական վարույթը:

Այսպիսով, Հանձնաժողովն իր լիազորությունների սահմաններում իրականացրել է իրավաչափ վարչարարություն՝ պահպանելով օրենսդրական բոլոր կարգավորումները:

Փաստում ենք նաև, որ Օրենքի գործողությունը Հայաստանի Հանրապետությունում տարածվում է տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորների վրա (Օրենքի 1-ին հոդված 4-րդ մաս), և Դիստրիբյուտորը, հանդիսանալով ցանցային օպերատորներին տարածման նպատակով տեսալսողական ծրագրեր տրամադրող իրավաբանական անձ, պարտավոր է

պահպանել տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջները, իսկ Օրենքի դրույթները խախտելու դեպքում կրել պատասխանատվություն Օրենքով սահմանված կարգով, ուստի Օրենքի պահանջի չկատարումն ինքնին բերում է պատասխանատվության:

Դիստրիբյուտը պետք է հաշվի առնի, որ օրենքներով հստակ սահմանվում են իրավական նորմեր, որոնց չպահպանելը առաջացնում է իրավական հետևանքներ, և Դիստրիբյուտորը պատասխանատվություն է կրում տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող օրենսդրության կիրառման ապահովման համար և տվյալ դեպքում Դիստրիբյուտորը պարտավոր էր պահպանել Օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դրույթի պահանջը:

Այսպիսով, վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է, որ խախտվել է Օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջը, և Դիստրիբյուտորի կողմից թույլ է տրվել իրավախախտում, որը համապատասխանում է Օրենքի 57-րդ հոդվածի 25-րդ մասի հատկանիշներին:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ կարգավորող պետական մարմինը՝ Օրենքի խախտման կամ իր որոշումները չկատարելու դեպքում կիրառում է պատասխանատվության միջոցներ:

Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կարգավորող պետական մարմնի կողմից տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու և դրանց մասին կարգավորող պետական մարմնին գրավոր տեղեկացվելու դեպքում կարգավորող պետական մարմինը կիրառում է հետևյալ վարչական տույժերը.

1) գրավոր նախազգուշացում.
2) տուգանք.
3) հեղինակազորման կամ լիցենզիայի գործողության կասեցում.
4) հեղինակազորման կամ լիցենզիայի գործողության դադարեցում:

Օրենքի 57-րդ հոդվածի 25-րդ մասը սահմանում է.

«25. Առանց սույն օրենքի 54-րդ հոդվածով սահմանված ծանուցման գործունեություն իրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով»:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 2-րդ և 4-րդ, 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով, 54-րդ հոդվածի 1-ին մասով, 55-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 57-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 57-րդ հոդվածի 25-րդ մասը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը ***որոշեց.***

1. «ՎԻ ԷՄ ՏԵԼԵՊՐՈՋԵՔԹ» ՍՊ ընկերության նկատմամբ կիրառել վարչական տույժ՝ տուգանելով սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն «ՎԻ ԷՄ ՏԵԼԵՊՐՈՋԵՔԹ» ՍՊ ընկերությանը պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Տ. ՀԱԿՈԲՅԱՆ**

2024 թ. ապրիլի 12
ք. Երևան